Կանանց զգեստի էական մասերն են՝ ճալավը, փոխանը, արխալուղը, մինբանան, fուլfը, կöտին, կուլպան և foղը:

1. Հալավ: Անմիջապես մարմնի վրա հագնում են լայն և երկար, մինչև ոտի երեսը հասնող շապիկը՝ ճալավը, որը կարում են կարմիր գույն ունեցող կտորից՝ մանուդվարուց կամ չթից: Կարմիր գույնը պաշտպանական գույն է: Հայտնի է, որ հնուց, դեռևս բրոնզի դարերում, սովորություն է եղել դիակը և նույնիսկ գերեզմանի պատերը ծածկել կարմիր ներկով, որը պիտի պաշտպաներ չար ոգիների մերձենալուց: Հարուստներն ընտրում էին բաց կարմրագույն մետաքսե, դրեյի կտոր: Բայց և համեմատաբար չքավորները շապկի երևացող, շան-շար մասերն, այն է՝ կուրծքը մինչև գոտկատեղին և թեվfերի ծայրերը, մի կեղ՝ թիզ երկարությամբ կարում էին դրեյից: Կրծքի կտրվածքի եզրերին կարում էին բալթա, հարուստները զառ բալթա, դայթանի վրա փաթաթած արծաթե ոլորած թել՝ կլապիտոն, երբեմն էլ ասեղնագործում էին գունավոր թելերով: Վիզը՝ օձիքը կոճկվում էր առջևից և ունենում մեկ կամ երկու կոճակ, արծաթե կամ ոսկե:

2. Փոխանը լինում էր միշտ երկտակ՝ բրկու տակ. կարում էին մինչև ծնկները կարմիր մանուդվարի, իսկ ներքև, մինչև փողկի բէրանը, դրեյի աստառը՝ տանը գործած և ավելի հաստ պէմբակ շէլէ կտորից: Այս դեպքումն էլ գերադասություն էր տրվում կարմիր գույնին: Փոխանը լինում էր լայն և երկար, հասնում էր մինչև թոփուղը՝ կոճը: Վերին մասը 4 սմ լայնությամբ ծալվում էր խոնջան գցելու համար և կոչվում էր խոնջանադարց՝ դարձ: Խոնջանը՝ բամբակե կամ բրդե, գործում էին խոնջանատorfի վրա, ծայրերին սարքում էին փընջէր: Հանգուստում էին առջևից, ինչպես տղամարդիկ:

3. Արխալուղը հագնում էին հալավի վրա: Նա երկար էր և իջնում էր մինչև ոտքի կոճերը, ծածկելով փոխանը: Կարվում էր մեծ մասամբ կարմիր կամ կանաչ գույնի կտորից գնելու մախմուրից՝ թավշից, մարինոսից, բրդից՝ բուրսից՝ մետաքսից, անտիկ մորեյից, զառ խառայից: Կոչվում էր նաև բրէf՝ փէշկանի (երեք), քանի որ գոտկատեղից ներքև աջ և ձախ կողմերից ուներ մի-մի կտրվածք և այդպիսով ստացվում էին երեք փէշկէր: Եռևի փէշկի լայնությունը հավասար էր առջևի երկու փէշկէրի լայնությանը միասին: Կուրծքը՝ յախան, եռանկյունաձև բացված էր: Ամբողջ արխալուղի, բացի վզից, ինչպես և կրծքի բացվածքի և կողքերի կտրվածքների եզրերին կարում էին 4—6 սմ լայնությամբ մի föբա[3] նեղ կտոր կամ ժապավեն: Եթե արխալուղը կարմիր գույնի էր, կարվում էր կանաչ föբա, և ընդհակառակը: Պորտի մոտ կոճկվում էր կամ մի հատ արծաթե կոճակով, որը լինում էր 15—20 կոպեկանոց դրամ օնկն արած՝ ունկն արած, տակից կանթ լրհեմած, և դայթանից շինած մէրավ՝ մայրով, օղով, կամ չորս արծաթե մանեթանոցներից կազմված չափրաստավ: Արխալուղի մեջ ամառ-ձմեռ դրվում էր բամբակե բարակ շերտ, որն աստառի հետ շուլալվում՝ մթելվում էր, որպեսզի բամբակը չթափվի: Թէվfէրն երկար էին, ներսի կողմից արմունկից մինչև բաբը կտրրված: Այս կտրվածքների արտաքին եզրերին կարում էին արծաթե. կամ ոսկե թիվթիշի, շիֆթիշի՝ կոճակներ, պուժուժնէր[4] կամ դնիգմանէր, 6—12 հատ[5],

---

[3] Кайма.

[4] Արծաթե բոժոժ. բիզ-բիզ քթով, երեսը կոկլիկ՝ հարթ:

[5] Տե՛ս 117 էջի 6-րդ ծանոթագրությունը: